

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՄԱՀՎԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 16-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի ողջ միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը թափորով գնում են ս. Գայանե վանքի մոտ գտնվող միաբանական գերեզմանատուն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու և հոգեհանգստյան արարողությամբ ոգեկոչելու ԺԷ դարի մեծ պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցու հիշատակը:

Հանդիսությանը նախագահում է փոխլուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հայրենասեր պատմիչի համեստ տապանաքարը ծածկվում է թարմ ծաղկեփնջերով ճեմարանի ուսանողների կողմից: Հանդիսավոր և վեհ հնչում են հոգեհանգստյան երգերը, որոնք կատարում են հոգևոր ճեմարանի ուսանողները:

Մի պահ բոլորի հիշողության մեջ վերակենդանանում է պայծառ անունը Մայր Աթոռի երախտաշատ միաբանի, որը «յողորմելի ծերութեան» հասակում, «ցաւագար մարմնով», թույլ ու դողդոջ ձեռքով ու տկարացած աչքերով գրի առավ իր պատմությունը և փափագ հայտնեց իր սիրած ու պաշտած ս. Էջմիածնի նվիրական հարկի տակ «ամփոփիլ ի հող»:

Հայրենասեր պատմիչի իղձը կատարվել է: Եվ այսօր էլ նա հանգչում է համեստ մի շիրմաքարի ներքո, հարևանությամբ մեր մշակույթի և պատմության այլ վաստակավորների, ս. Էջմիածնի հովանու ներքո, Արարատի հավերժական նայվածքի տակ:

Հոգեհանգստյան ավարտին բոլոր ներկաները վերադառնում են հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճ, որտեղ ժամը 11-ին սկսվում է Առաքել վրդ. Դավրիժեցու հիշատակին նվիրված հանդիսությունը՝ տ. Հուսիկ եպիսկոպոսի նախագահությամբ:

Հանդիսությունը սկսվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով:

Հոգևոր ճեմարանի ուսանողական երգչախումբը կատարում է «Որք զարդարեցին» շարականը: Հանդիսության բացումը կատարում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ բարձր գնահատելով Առաքել պատմիչի եկեղեցանվեր ու հայրենասիրական գործունեությունը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի մի խումբ ուսանողներ՝ Սամվել Պետրոսյանը, Վրեժ Նաջարյանը (Գ դասարան), Խաչիկ Խաչատրյանը, Կտրիճ Ներսիսյանը (Բ լսա-

Հոգևոր հեմարանի ուսանողները, տեսչի գլխավորությամբ, Առաքել վրդ. Դավրիժեցու շիրմի մոտ

Առաքել վրդ. Դավրիժեցու շիրիմը

ռան) և Սեզար Գոնտրալյանը (Ա լարան) ընթերցում են հատվածներ Առաքել Դավրիժեցու պատմությունից: Ճեմարանի երգչախումբը կատարում է՝ «Երևան բաղ եմ արել», «Էրեբունի», «Էջ Միածինն ի Հօրէ» և «Ճեմարանի քայլերգ» խմբերգերը:

Ապա Առաքել Դավրիժեցու կյանքի և գործունեության լայն լուսաբանությամբ և շահեկան բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի ավագ դասախոս և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը: Հիշյալ բովանդակալից զեկուցումը տպագրված է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 22):

Առաքել վրդ. Դավրիժեցու հիշատակին նվիրված հանդեսի փակումը կատարում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը: Սրբազան հայրը վեր է հանում Մայր Աթոռի լուսամիտ ու հայրենասեր միաբանի կատարած եկեղեցանվեր ու հայրենասիրական գործունեությունը և կոչ է անում ուսանողությանը՝ իրենց ուսումնառության և ապա գործունեության հաջորդ տարիներում ընթանալ Առաքել վրդ. Դավրիժեցու եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեության պատվավոր ճանապարհով՝ լավագույնս ծառայելու համար Մայր Աթոռին, հայ ժողովրդին և մեր վերածնված մայր հայրենիքին:

Հանդեսը վերջանում է սրբազանի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով: